



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 29 ՄԱՐՏ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոնների պահելու կերպը,  
եւ մշտապէս պիտի կատարեմ վանոնք:  
Տուր որ հասկնամ Օրէնքդ,  
որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:  
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս,  
որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ:  
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի,  
Քան անձնական հարստութիւն դիպելու:  
Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն,  
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:  
Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուր խոստումդ,  
այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն:  
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,  
որովհետեւ վճիռների արդար են:  
Միակ փափաքս է՝ հրահանգների կատարել.  
Կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



## ԱԲԱԳ ՇԱԲԱԹ

Մեծ Պահքի շրջանը կ'աւարտի Ծաղկագարդով, Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ: Հերաքրքրական է, որ Աստուածաշնչական հապուածները այդ օրուան մեզի կը ներկայացնեն հետեւեալ դէպքերը. Երկու կոյրերուն բժշկութիւնը, Երուսաղէմ յաղթական մուտք եւ ապա Տաճարի մաքրագործումը: Իրարայաջորդ դէպքերը կու գան ցոյց տալու, որ եթէ կ'ուզենք հասկնալ Աստուծոյ փրկագործութեան ծրագրին խորհուրդը, եթէ կ'ուզենք տեսնել Յիսուսը որպէս Քրիստոս՝ Աստուծոյ Օծեալը, Յիսուսը որպէս թագաւոր, պէտք է որ մեր աչքերը բացուին: Ապա Անոր յաղթական մուտքը Երուսաղէմ, եւ ապա Տաճար: Այս անգամ մուտք գործելու մեր անձերէն ներս, մեր կեանքէն ներս, որպէս անձեռագործ փաճարներ Աստուծոյ, սակայն այնպէղ մաքրագործում է որ տեղի կ'ունենայ, որպէսզի Ինք այնպէղ բնակի, որովհետեւ այդ փունը աղօթքի փուն է:

Ծաղկագարդը յաջորդող Շաբաթը, որ կը կոչուի Աւագ Շաբաթ, մեզի կը ներկայացնէ Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին շաբաթը, որ կը կոչուի նաեւ չարչարանաց շաբաթ: Իւրաքանչիւր օր իր մէջ ունի խորհուրդը փրկագործութեան ծրագրին: Օրուան Աստուածաշունչի հապուածները ըստ այնմ մեզի կը ներկայացնեն այդ բոլորը:

Աւագ Երկուշաբթի, Արարչագործութեան խորհուրդը ունի իր մէջ, Աստուծոյ սրեղծագործութիւնը, որու աւարտին սրեղծեց մարդը Իր պարկերին ու նմանութեանը համաձայն: Բայց հերաքրքրական է, որ Աստուածաշնչական հապուածը մեզի կը ներկայացնէ Քրիստոսի խօսքը, որ կ'ըսէ. «Մարդու Որդին եկաւ որպէսզի սպասարկէ, ծառայէ, եւ Իր կեանքը տալ մարդուն համար»:

Աւագ Երեքշաբթի, նաեւ ծանօթ որպէս Տասը կուսանաց, ուր Քրիստոս կը պատմէ թէ Երկնքի Արքայութիւնը կը նմանի այդ փառքը կոյսերուն, որոնք կը սպասէին Փեսայի գալուստին: Փեսան ուշացաւ, բոլորը գնացան, երբ Փեսան ժամանեց արթնցան, բայց անոնցմէ հինգը յաւելեալ ձեռք չունէին որպէսզի կարենային Փեսան դիմաւորել, ուստի Փեսան եկաւ եւ անոնք դուրս մնացին: Կը յիշեցնէ մեր վիճակը, թէ որքանով յաւելեալ ձեռք ունինք որպէսզի մինչեւ վերջ կարենանք մեր կեանքի ու հոգիի լապտերներ վառ պահել, եւ երբ Փեսան գայ, կարենանք Իր հետ մտնել Արքայութիւն:

Աւագ Չորեքշաբթի, օրուան մարտնչութեան, Աստուածաշնչական պատմները մեզի կը ներկայացնեն Յուդայի ծրագիրը, որ արդէն կը մտածէ Յիսուսը մարտնչելու մասին, երեսուն արծաթի: Խորհուրդ մը, որ կը յիշեցնէ մեզ թէ որքան զգոյշ ըլլալու ենք, որ մենք ալ ինչ ինչ պատճառներով չմարտնչենք մեր Տէրն ու Փրկչին, մէկը որ Իր կեանքը տուած մեզի համար:

Աւագ Հինգշաբթի, Վերջին Ընթրիք եւ ոտնուայի խորհուրդը: Այս օրը կը ներկայացնէ հաղորդութեան սկզբնաւորութիւնը, երբ Քրիստոս Վերնապան մէջ Իր աշակերտներուն հետ միասին Զապական ընթրիքը ըրաւ, եւ սակայն նոր խորհուրդ մը տուած անոր, ըսելով, արեւ կերէք ու խմեցէք այս ա Իմ մարմինս եւ արիւնս: Այն ինչ որ ամէն Կիրակի կը կատարուի Ս. Պատարագի ընթացքին: Անոր կը յաջորդէ ոտն լուայի արարողութիւնը, որ Քրիստոս կատարեց լուայով Իր աշակերտներուն ոտքերը: Յոյց տալով Իր ծառայական կերպարը, եւ անով ստրեցնելու որպէսզի մենք ալ նմանինք Իրեն:

Աւագ Ուրբաթ, չարչարանքի, խաչելութեան եւ թաղման խորհուրդը ներկայացնող հապուածներ, որոնք ցոյց կու տան, թէ ինչպէս Քրիստոս ճաշակելով մարդկային բոլոր տեսակի հանգրուանները, անով կարեկից դառնալու մեզմը իւրաքանչիւրին, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ:

Աւագ Շաբաթ, ճրագալոյց աւերելու Քրիստոսի հրաշափառ յարութեան լուրը: Սպասումը մարդ արարածին: Այսօր բոլորս անխտիր այս կամ այն ձեւով կը պայքարինք մահուան դէմ: Առաւել եւս այս վերջին օրերուն, երբ հիւանդութիւնները, ժահրը, համաճարակը, ամէն փուն այցելով կեանքեր կը խլէ: Բայց Քրիստոսի յարութեան աւերիսով, Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Մահ ո՛ր է քու խայթոցդ, ո՛ր է քու յաղթանակդ» Ա Կորնթ 15:58: Ահա այս աւերիսն է, որ հիմնաքարը կը դառնայ Քրիստոնէական հապաքին: Այլապէս առանց այս հիմնաքարին, կարելի չէ պարկերացնել քրիստոնէական հաւաքը: Որովհետեւ քրիստոնէայ հաւաքացեալին համար ճանչնալ Քրիստոսի յարութեան գօրութիւնը, եւ նոյն հաւաքով շարունակել հասնելու մինչեւ մեր յարութեան: Այդ իսկ է խորհուրդը երբ Քրիստոս Իր սիրելի բարեկամին Ղազարոսի մահուան առիթով կ'ըսէ. «Ղազարոս չէ մեռած, այլ կը քնանայ, երթամ արթնցնեմ»: Մեր ալ պարագային, մենք կամ մեր պարագաները երբ պահը կը հասնի մեր հոգիները աւանդելու, ինչ կ'ընենք եթէ ոչ՝ կը քնանանք, ու կը սպասենք մինչեւ այն օրուան երբ Քրիստոս Իր երկրորդ գալուստով գայ ու արթնցնէ մեզ, որպէսզի ժառանգորդները դառնանք երկնքի արքայութեան: